

պետէն արձակուած են: (Հմմ. իմ կենս. Ս. Սարաֆեանի, 1908, էջ 219):

Յիշեալ Մեսրոպ Վ.ին ձեռքն ինքնին Աբէլ Արքեպ. յանձնած է քահանայ ձեռնադրելուն ինչպէս նաեւ մասնաւոր (չորս աստիճան) եւ ծայրագոյն վարդապետութիւն տալուն վկայականները, զորոնք այստեղ յառաջ կը բերեմ (Գիւ. Անտոնեանց), իրենց սխալներովն, վարդապետութեան վկայականներուն սովորական ձեւերը կը ճատելով:

Քահանայութեան ձեռնադրութեան վկայականին գլուխը կայ ձեռնադրողին կնիքն՝ երեք անգամ կոխուած, որուն ընթերցուածն է «(Է) ՔԻ ԾՌ ԱԲԷԼ ՎԱՐԳՏ ՌՃՁԷ», (= 1738). ինչպէս յայտնի է ծայրագոյն վարդապետութիւն ունեցող եպիսկոպոսները պարզապէս «վարդապետ», կը կոչէին հիները: Թէպէտ սոյն երեք վկայականներն աւելի ձեռնադրելոյն կենսագրութեան կը վերաբերին, պէտք եմ այստեղ դնել, վասն զի Աբէլ Արքեպ.ին կենսագրութեան վերաբերեալ կէտեր կը բովանդակեն:

Վկայական քահանայ ձեռնադրութեան Մեսրոպ Վ.ին:

(Կոնդակի վրաս կնիք նրէք անգամ կոխուած: Ընթերցուածն է՝ «(Է) ՔԻ ԾՌ ԱԲԷԼ ՎԱՐԳՏ ՌՃՁԷ», (= 1738):)

Է.

Յիսուսի Քրիստոսի ծառայ Տէր Աբէլ վարդապետէս եւ Արքեպիսկոպոսէն Հայոց. Հասցէ գիր օրհնութեան եւ նամակ պահպանութեան: Յորմէ